

ՊՐՈԼԵՑԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՄԻԱՅԵՔ

ՀՅՈՒՄՆԱԿՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ  
ՎԵՐԵԼԲԻՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
СТАТИСТИКИ  
Ленинградского  
СССР

338.1

2-69

ԿՈՒՍՂՐԱՅ ԴՈՍՏՈՎ. ԴՈՆ 1933

2 802 - 10

Պրոխոարներ բոլոր յերկրների, սիւսցե՛

34-И  
641

338.1  
2-69

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ  
ՎԵՐԵԼՔԻՆ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
СОСТОЯНИЕ  
Академии Наук  
СССР



33-81028

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒԼԻՍ  
1989



29 921

12.06.2013



55978-66

Отв по выпуску А. Г. АВАКОВ Тех. ред. О. ТЕР-ДАВЫДОВ

Сдано в набор 20-ХІІ-1933 г.  
Партиздат. Р. н-Д. Издан. 562.  
Формат бумаги 125x16—1/32.  
Уполкра лит № В—1374

Подписано в печ 24/ХІІ 1933 г.  
Об'ем 7/8 печ. листа.  
Заказ № 6107.  
Тираж 2000 экз

Типография им. Стачки 1932 года СКПІ в г. Ростов на Дону

### ՀՅՈՒՄԻԱՆՅՈՒՆ ԿՈՎԿԱՍՆ ԱՎԱՐՏԵՑ ԶԱՅԱՀԱՆՁ- ՆՈՒՄԸ ԲՈՂՈՐ ՍԵԿՏՈՐՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՈՂՈՐ ԿՈՒԼ- ՏՈՒՐԱՆԵՐՈՎ

ՀԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆ — ընկ. ՍՏԱՆԻՆԻՆ, ընկ. ԿԱԳԱՆՈՎԻՉՅԻՆ,  
ԽՍՀՄ-ի ԺՈՂԿՈՄՍԵՈՐԸ — ընկ. ՄՈՒՈՏՈՎԻՆ, Կուսակցության  
կենտրոնական օրգան — «ՊՐԱՎԴԱՅԻՆ»

Մեր կուսակցության սիրելի առաջնորդ ընկ. Սա-  
լիևի կողմից զլխավորվող ՀԿ(Բ)Կ լենինյան Կենտ-  
րոնի անժիջական ղեկավարությամբ և մշտական աջակ-  
ցությամբ Հյուսիսային կովկասը ղեկտեմբերի 10-ին  
լիովին ավարտեց իր հացահանձնման պետական պար-  
տավորությունները բոլոր սեկտորներում և բոլոր  
կուլտուրաներով:

Այս տարի յերկրամասն իր պարտավորություն-  
ները յերկու ամսով ավելի շուտ կատարեց, քան  
նախորդ տարիները և պետությունը 25 միլիոն  
փութ ավելի հանձնեց, քան անցյալ տարի: Այս տարի  
հանձնված հացի քանակով յերկրամասը զերազան-  
ցեց բոլոր նախորդ տարիներին, բացի 1931 թվակա-  
նին, ժորն առանձնապես բերքառատ տարի յեր:

Կուսակցության կենտրոնի ուղղակի ցուցմունքով  
և աջակցությամբ խորտակելով անցյալ տարվա ձմա-  
նը կուլակուլության կազմակերպված սաբոտաժը Կուբա-



նում և յերկրամասի մի շարք ռայոններում, կուսակ-  
ցական կազմակերպութիւնները, բանվորները և կու-  
տնտեսականները, կատարելով այն ցուցմունքները,  
վորը տվեց ընկ. Ստալինը Կենտկոմի հունվարյան պլե-  
նումում և հարվածային կոլտնտեսականների համա-  
գումարում, ձեռք բերին առանձին հաջողութիւն-  
ներ գարնանացանի ժամանակ: Իսկ այժմ ամրացրին  
այդ հաջողութիւնները՝ բարեխղճորեն կատարելով  
հացը պետութեան հանձնելու իրենց պարտավորու-  
թիւնները:

Քաղբաժինները, վորոնք ստեղծվեցին ընկ. Ստալինի  
նախաձեռնութեամբ, վճռական դեր խաղացին կու-  
տնտեսութիւններն ամրացնելու գործում և զբանով  
իսկ ապահովեցին մի քայլ առաջ դեպի կոլտնտեսա-  
կանների ունեւոր և կուլտուրական կյանքը: Քաղբա-  
ժինների ղեկավարութեամբ լավացրինք խորհանտե-  
սութիւնների աշխատանքը:

Այս տարի կուսակցութիւնը և կառավարութիւնը  
հսկայական ոգնութիւն ցույց տվին յերկրամասի  
կոլտնտեսականներին և մենատնտեսներին տրակտոր-  
ներով, կոմբայներով և այլ մեքենաներով, սերմա-  
ցուններով, և պարենով: Այդ բանը հնարավորութիւն  
տվեց յերկրամասին հաղթահարելու 1932 թվականի  
սաբոտաժը և բարձրացրեց յերկրամասի գյուղատնտե-  
սութիւնը:

Տերկրամասի կոլտնտեսութիւններն ու խորհանտե-  
սութիւններն այս տարի գարնանացան և աշնանա-  
ցան հացահատիկը ցանեցին անցյալ տարվա չափ,  
բայց վորակով զգալի չափով ավելի լավ և պայքար  
են մղում գարնանացանի հաջող անցկացման համար,  
նրա համար, վորպեսզի հնարավոր լինի լիովին վերջ  
տալ յերկրամասի հետամնացութեանը գյուղատնտե-

սութեան ասպարեզում և դուրս բերել նրան առաջա-  
վոր դիրքերում:

Արդեն ունենք գարնանացան սերմացունների ան-  
հրաժեշտ քանակութեան 80 տոկոսը: Վոչ ուշ, քան  
դեկտեմբերի 25-ը յերկրամասը լիովին կապահովվի  
սերմացուններով: Պայքարում ենք տրակտորների և  
այլ գյուղատնտեսական մեքենաների վերանորոգումը  
ժամանակին ավարտելու, մինչև գարնանացանի կամ-  
պանիայի սկիզբը կոլտնտեսային կազրերը նախա-  
պատրաստելու համար: Առաջավոր կոլտնտեսային  
բրիգադների նախաձեռնութեամբ, մեր կուսակցու-  
ցութեան 17 ըզ համագումարին ղիմավորելու համար  
յերկրամասում լայն չափով ծավալվում է 1934 թվի  
բարձր բերքատուութեան բրիգադների ստալինյան  
կոչը:

Հյուսիսային Կովկասի կոլտնտեսութիւններն ու  
խորհանտեսութիւններն իրենց հաջողութիւններով  
պարտական են Լենինի — Ստալինի կուսակցութեան,  
և ամենից առաջ՝ նրա առաջնորդ ընկ. Ստալինի բոլ-  
շեվիկյան ղեկավարութեան: Հյուսիսային Կովկասի  
բոլշեվիկները հաստատ պարտավորութիւն են տալիս  
Համկոմկուսի Կենտկոմին, ընկ. Ստալինին ազնվորեն  
պայքարելու մեր կուսակցութեան գլխավոր գծի հա-  
մար, բոլշեվիկյան կոլտնտեսութիւնների, ունեւոր կյան-  
քի համար:

ՀԿ(բ)Կ Հյուսիսային Կովկասի յերկրկոմի ԲԱՏՈՒՂԱՐ՝  
Բ. ՇԵՆՈՂԻՍՅԵՎ

Հյուսիսային Կովկասի յերկրգործկոմի ճախագան՝  
Վ. ԼԱՐԻՆ



## Վ Ե Ր Ե Լ Ք Ի Ն \*

Հյուսիսային Կովկասը — դա մեր հեղափոխության նախկին Վանդեան եր, անցյալում — ցարական բռնակալության հենարանը: Մրանումն և Հյուսիսային Կովկասի առանձնահատկությունը, վորը բնորոշում է դասակարգային պայքարի առանձին սրվածությունը Կուբանում, Իոնում, Թերեքում վոչ միայն խորհրդային իշխանության հաստատվելու շրջանում, այլ նաև գյուղի սոցիալիստական վերակառուցման ժամանակ:

1932 թվականին, նոր, արդեն կոլտնտեսային և խորհունտեսային հիման վրա, հին թշնամին, կամ ավելի ճիշտ, նրա մնացորդները — սպիտակ գվարդիականները, սոմոստիյնիկները, կուլակությունը և նրանց համախոհները, հարմարվելով նոր պայմաններին և զաղտագողի ու հանդարտորեն թափանցելով կոլտնտեսություններում և խորհունտեսություններում, փորձեցին ՚երջուստ քայքայել, պայթեցնել նրանց, վիժեցնել ցանքսը, վիժեցնել հացամթերումները:

Կուսակցական կազմակերպության և ամենից առաջ կուսակցության յերկրային կոմիտեյի սխայները կայանում էյին նրանում, վոր նրանք չնկատեցին պայքարի այս նոր ձևերը և ինչպես մատնանշեց ընկ. Սաս-

լինը Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում. լիբերալ վերաբերմունք ցույց ավին 1932 թվի հացամթերման ինդրին: Նրանք չբարձրացրին կոմունիստների զգոնությունը, թույլ ավին կուլակությանը և նրա գործակալներին խցկվելու կոլտնտեսություններում և առանձին կուսքիջներում և կազմակերպելու հացահանձնման և ցանքսի սարոտած, վորի մեջ, ինչպես հայտնի յե, ներգրավվեց կոլտնտեսականների և մենատնտեսների մի մասը, առանձնապես Կուբանում:

Դեռ հոկտեմբերին, Ասիխան հունվարյան պլենումում, հասկապես ընկ. Սասլինը ցույց տվեց կուսակցական կերպուրյանը նրա սխայները, բաց արեց նրա աչքերը կուլակության կողմից կազմակերպված սարոտածի վորպես գուղասնեսնական աշխատանքներում Հյուսիսային Կովկասի հեռ մնալու գլխավոր պատճառի վրա: Կուսակցական կազմակերպությունը ազնուվորեն վերաբերվեց այս ցուցմունքներին և, ամրանալով ուժեղ բոլշևիկներին — քաղբաժինցիներին նոր ջոկատով, վոչ միայն խորտակեց սարոտածի կազմակերպիչ ուժը, այլ և նոր ձևով ձեռնարկեց կոլտնտեսություններն ու խորհունտեսությունները ղեկավարելու գործին: Սարոտածի դեմ տարվող այս պայքարում ինքը՝ կոլտնտեսային գյուղացիությունը խոշոր դաս վերցրեց, փորձով համոզվեց, վոր կուլակային սարոտածի, կոլտնտեսային հասարակական սեփականության հափշտակման ճանապարհով նա կղիմի ղեկավարիչը և քայքայումը և վոր միայն կոլտնտեսային բարեխիղճ աշխատանքի ուղին կարող է ապահովել ունևոր կյանքը: Կոլտնտեսականների համազուժարում ընկ. Սասլինի արտասանած ձևոր, հացահանձնման ղեկրեաը հանդիսացան այնպիսի շրջադարձային մոմենտներ, վորոնք նպատակեցին վերջնականապես վերա-

\* 1933 թ. դեկտ. 15-ի «Գրավզան»



ցնելու կոլտնտեսականների այն խմբերի տատանումը, վորոնք կուլակային ազգեցութեան ներքո եյին զըսնվում:

Այն հակայական ոգնութեանը, վոր ցույց տվեցին կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեն և կառավարութեանը Հյուսիսային Կովկասին՝ մեքենաներով, սերմացուներով, կերով և պարենով, ակնհայտ կերպով ցույց տվեց յուրաքանչուր կոլտնտեսականին, վոր խորհրդային իշխանութեան քաղաքականութեանն ուղղված է ամրացնելու կոլտնտեսութեանները, ոգնելու յուրաքանչուր բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին:

Այդ եր պատճառը, վոր 1933 թվի գարնանացանը Հյուսիսային Կովկասում անցավ չսեսնված արսաղ-բական խանդավառութեամբ: Ծարատունկերի քաղհանը և հացաբույսերի բերքահավաքը վերջնականապես ցույց տվին, վոր կոլտնտեսութեաններում դեպի աշխատանքն յեղած վերաբերմունքն արմատապես փոխվել է:

Երբքի հափշտակման դեմ մղվող պայքարի ուժեղ թափը, վորի մեջ լայն չափով ներգրավվեցին նույնիսկ պիոներներն ու կոլտնտեսային յերեխաները, ցույց տվեց, վոր կոլտնտեսականների ամենալայն մասսաները լրջորեն ձեռնարկեցին հափշտակիչներին, գողերին և ձրիակերներին դեմ պայքարելու գործին: Վերջապես հացահանձնման տեմպերն ու չափերը ցույց տվեցին, վոր վճռականապես փոխվել է կոլտնտեսութեանների և կոլտնտեսականների վերաբերմունքը դեպի պետական պարտավորութեանները:

Վերպեսդի ճիշտ գնահատվի ընթացիկ տարվա հացամթերման ընթացքը, դրա համար հարկավոր է մատնուցել վոր յերկրամասն այս ասորի ավելի շատ հաց

հանձնեց, քան բոլոր նախորդ տարիները (բացի առանձնապես բերքառատ 1931 թ ից): Միևնույն ժամանակ նկատի պիտի ունենայ նաև այն, վոր յերկրամասը հացահանձնումը յերկու ամսով ավելի շուտ կատարեց, քան բոլոր նախորդ տարիները, իսկ հասկավորների (ցորեն, հաճար, գարի, վարսակ) հանձնումը կատարեց նոյեմբերի սկզբին: Հասկավորների հանձնումից հետո պլանի մնացած մասի կատարումը ձգձգվեց միայն յեզիպտացորենի պատճառով, վորը կազմում է վողջ պլանի 30 տոկոսը և դաշտերից հավաքվում է միայն հոկտեմբեր — նոյեմբեր ամիսներում: Դա նշանակում է, վոր կոյսնեստութեանները բարեխղճորեն, բեքահավաքի չափով կատարեցին իրենց առաջին պահումը:

Կոլտնտեսութեանների այս բոլշիկյան ամրացումը հանդիսանում է կուլակութեանը և նրա կազմակերպած սաբոտաժը ջախջախելու անմիջական արդյունքը: Ինքնահոսի հերոսների հայտնաբերումը, կուլակութեան հետ միացած և սաբոտաժը քույրակող աջ ուղորտունիստների ջախջախումը, առաջավոր հարվածային կոլտնտեսականներից կազմված բոլշիկյան ակտիվ համախմբումը, կոլտնտեսականների, վորպես սոցիալիստական կուլիկտիվ տնտեսութեան մասնակիցների գիտակցութեան անումը, մասսաների և տնտեսութեան կուսդեկավարութեան լավացումը — ահա թե ինչն էր, վոր ապահովեց հաջողութեանները:

Այժմ ամեն մի կոլտնտեսականի համար հասկանալի յե, վոր այն 20 — 30 կիլոգրամ հացը մի աշխորին, վոր ստանում են առաջավոր կոլտնտեսութեաններում, կարող է ստանալ բոլոր կոլտնտեսութեանների յուրաքանչուր կոլտնտեսականը, յեթե նա բարեխղճորեն աշխատի:



Աւժգին թափով աճում է կոլտնտեսականների հետաքրքրութիւնը դեպի կոլեկտիվ տնտեսութեան հարցերը: «Պրավդայում» տպված Հյուսիսային Կովկասի կոլտնտեսականների բազմաթիվ նամակները (Սովետական ՄՏ կայանի կոլտնտեսականների, արցակցոյ 250 բրիգադների, Կարարդինո — Բարկարիայի հարվածայինների և այլոց նամակները) այդ են ասում, խոսում են միլիոնավոր կոլտնտեսականների մտադրութիւնների և ակնկալութիւնների մասին, վորոնք (կոլտնտեսականները) վճռել են պայքարել ունևոր և կուլտուրական կյանքի համար:

Կոլտնտեսականների տրամադրութեան մեջ առաջացած հենց այդ բեկումն է, վոր պայմանավորեց աշխատանքի վերելքը: Այս վերելքը հատկապես նշանակալից է նրա համար, վոր միայն ընդամենը մի տարի առաջ ստանիցաներում սուր պայքար էր տարվում կուլակային սարտաժի դեմ: Սակայն հենց դրա համար ամենավտանգավորը կլինէր այն, յեթե այս առաջին հաջողութիւնները թուլացնէին կուակագմակերպութեան զգոնութիւնը և զորահավաքվածութիւնը: Վտանգավոր կլինէր, յեթե կուակացական կազմակերպութիւնները մոռանային, վոր կուլակութեան չլարված մնացորդները դեռ չեն դադարեցրել պայքարը և դեռ վոչ բոլորն են մաքրված կոլտնտեսութիւններում: Յերկրամասի կոլտնտեսութիւնների լքվածութիւնը զգալի չէ: Հեշտ չէ լիովին հաղթահարել կոլտնտեսական դարձած յերեկվա մանր սեփականատիրոջ տրամադրութիւնը, հեշտ չէ հաղթահարել հին սովորութիւնները:

Կոլտնտեսութեան մեջ աշխատանքի հիմնական թեթութիւնը ամենից առաջ շարունակում է մնալ թեև լավացնող, բայց դեռ ևս գյուղատնտեսական աշխատանքի

սանկների վաս վորակը, ցանքաի ժամկետների ձրգձգումը, բերքահավաքի ժամանակ տեղի ունեցող մեծ կորուստները, դաշտերի ադտոսված լինելը և այլն: Յերկրորդը — մի աշխատանքը մյուսի հետ կապելու անընդունակութիւնը — խոշոր տնտեսութեան համար անհանգուրժելի կուլակային հերթականութիւնը, վորը վիժեցնում է գյուղատնտեսական աշխատանքները (որինակի համար, ցել, աշնանավար), վորոնք վճռում են հաջորդ տարվա հաջողութիւնները: Մարդիկ սպրում են այսորվա որով, չհասկանալով այս աշխատանքների ամբողջ կարևորութիւնները վաղվա համար:

Յերրորդ — մեքենաների և ամենից առաջ տրակտորի, կոմբայնի և կալսիչի տեխնիկայի վատ յուրացումը: Անփոփոխ, հաճախ զլաստարական վերաբերմունքը նրանց հանդեպ:

Չորրորդ — քաղող ուժի և անասունի անբավարար խնամքը, վորը հետևանք է կոլտնտեսութիւններում դեռևս գոյութիւն ունեցող ձիու և անասնաբուծութեան թերազնահատութեան: Յեկ, վերջապես, տեխնիկական և շատ աշխատանք կլանող մշակույթների (ճակնդեղ, գենագերչակ, բամբակ, ծխախոտ, արևածաղիկ, յեգիպտացորեն) թույլ յուրացումը, վորոնք Հյուսիսային Կովկասում մեծ դեր են խաղում և հատուկ մշակում են պահանջում: Բարձր բերք ապահովելու համար:

Բացի այս հոգսերից, կոլտնտեսային շինարարութեան մեջ դեռ ուրիշ շատ դժվարութիւններ կան: Կուակացական կազմակերպութիւնները, քաղբաժիններն ինչքան ավելի մոտենան կոլտնտեսութեան անմիջական արտադրութեանը, այնքան ավելի պարզ է դառնում այն, վոր հարկավոր է սովորեցնել մաս-



աաներին կառավարելու խոշոր կոչիկտիվ տնտեսութ-  
յունը:

Պետք է վերադաստիարակել այն տասնյակ հազա-  
րավոր կոլտնտեսականներին, վորոնք գիտեցին միայն  
անհատական մանր տնտեսութուն վարել, վորտեղ բո-  
լոր հարցերը վճռվում էին հասարակ ձևով, դարերով  
սահմանված սովորությունների համաձայն: Հենց այս  
կոլտնտեսականներից պետք է ստեղծել նոր մասնակից-  
ներ — բրիգադիւներ, դաշտավարներ, արակտորիստ-  
ներ, անասնաբույժներ:

Հարկավոր է սովորեցնել նրանց տիրապետելու  
տրակտորի, կոմբայնի և այլ գյուղատնտեսական մե-  
քենաների բարդ տեխնիկան, վորոնք հաղարներով և  
հարյուր հաղարներով մուտք են գործում կոլտնտե-  
սային արտադրության մեջ: Վերջապես հարկավոր է  
սովորեցնել նրանց գյուղատնտեսական խոշոր արտա-  
դրությունը վարելու ագրոնոմիայի, տեխնիկայի,  
հաշվապահության հիմունքով:

Այստեղ պապկնական փորձառությունը փոքր գեր  
է խաղում: Այս բոլորը կոլտնտեսականներին կարող  
են սովորեցնել միայն բոլշևիկներ — քաղբաժինցիները:

Հարկավոր է վերակառուցել կոլտնտեսային տնտե-  
սության նյութական հիմքը — նոր բրիգադային իջե-  
վանները, ձիախոռոնները, շտեմարանները, անասնաբու-  
ժական ֆերմերը և այլն: Հարկավոր է կարգի բերել  
կոլտնտեսային գյուղերը, ստանիցաները: Աճում են  
կոլտնտեսականների նյութական և կուլտուրական  
պահանջները: Վերակառուցվում է ամբողջ աշխա-  
տանքը և կենցաղը: Այս բոլորը նոր կարգ ու կանոնի  
դժվարություններ են, վորոնք, իհարկէ, վոչ մի կերպ  
չեն կարող համեմատվել անցյալ տարիների դժվար-  
ությունների հետ: Այն հանդամանքը, վոր այս դժվար-

րությունները կանգնում են մեր առաջ, նախ և առաջ  
համոզեցուցիչ կերպով ապացուցում է կոլտնտեսու-  
թյունների ամրապնդումը:

Կոլտնտեսությունների, վորպես սոցիալիստական  
սնտեսությունների ամրապնդման գործում հիմնա-  
կանն ամրացված է. ապահովվել է սոցիալիստական  
վերաբերմունքը դեպի կոլտնտեսային սեփականու-  
թյունը և կոլտնտեսային աշխատանքը:

Հյուսիսային Կովկասում քիչ չեն բոլշևիկյան կոլ-  
տնտեսություններ և ունևոր կոլտնտեսականներ,  
սակայն դեռ ևս քիչ աշխատանք չի պահանջվում,  
վորպեսզի բոլորովին չլինեն հետ մնացող բրիգադներ,  
կոլտնտեսություններ, ՄՏԿայաններ և ռայոններ, վոր-  
պեսզի նրանց ևս բարձրացնենք լավագույնների, «250»  
առաջավոր բրիգադների, առաջավոր Կարարդինո-  
Բալկարիայի մարզի մակարդակին:

Սրա համար այժմ կան բոլոր անհրաժեշտ նախա-  
պայմանները: Կոլտնտեսություններում նվաճված են  
վնդական դիրքեր: Յերկրամասի գյուղատնտեսու-  
թյունը գտնվում է բոլշևիկյան վերելքում:



## ԱՌԱՋԻՆ ԼՈՒՐՋ ՀԱՂԹԱՆՍԿՑ

Հյուսիսային Կովկասը գեկտեմբերի 10-ին, այսինքն՝ անցյալ տարվանից 2 ամիս ավելի շուտ, կատարեց հաղահանձնման պլանը պետութայն: Միևնույն ժամանակ այս տարի յերկրամասը պետութայնը 25 միլիոն փութ ավելի շատ հաց հանձնեց, քան նախորդ տարիները:

Այսպիսով, Ուկրայինայից հետո Հյուսիսային Կովկասն ևս, վորի նշանակութունը մեր յերկրի գյուղատնտեսութայն մեջ հանրածանոթ ե, հիմնականում հաղթահարեց իր հետամնացութունը:

Այսպիսով, մի անգամ ևս փառավոր կերպով հաստատվեց ընկ. Սալիևի նախագուշակումը, վորը, կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումում վերլուծելով գյուղում տարվող աշխատանքի թերութունները, ասաց. «Կարելի՞ յե արդյո՞ք ուղղել այդ թերությունները: Այո: Անպայման կարելի յե: Կուղղե՞նք արդյո՞ք նրանց մոտիկ ժամանակում: Այո: Անպայման կուղղենք: Դրանում վոչ մի կասկած չի կարող լինել:

Կարծում եմ, վոր ՄՏ կայանների յե՞վ խորհսնեստությունների փողբաժինները հանդիսանում են այն վնասկան միջոցներից մեկը, վորի ոգնությամբ հնա-

րավոր կլինի վերացնել այդ թերությունները՝ ամենակարճ ժամանակամիջոցում»:

Թերևս Հյուսիսային Կովկասում թերություններ ավելի շատ կային, քան մի այլ յերկրամասում կամ մարզում: Այս տեղ կուսակցական կազմակերպութայն ադտտովածութունն այն աստիճանի յեր հասել, վոր առանձին կուսբջիջներին գլխավորում եյին բացարձակ հակահեղափոխականները (Կոտովի և ուրիշների գործերը): Այստեղ, կուսկազմակերպութայն ադտտովածութայն և հեղափոխական զգոնութայն բթացման հետևանքով, անցյալ տարի շատ կուտնտեսություններում կառավարում եյին նախկին գեներկինցիները, պետլյուրոլյան սպաները և ուրիշ սպիտակ բանդիտական թափթփուկները: Հատկապես հենց Հյուսիսային Կովկասն ուներ ի նկատի ընկ. Սալիևը՝ «Գյուղի աշխատանքի մասին» իր արտասանած ճառում, մասնանշելով, վոր հակահեղափոխականների մի մասն «ինքն ե ձգտում ստեղծել կուտնտեսությունների նման մի բան, ոգտագործելով նրանց, վորպես իրենց ընդհատակյա կազմակերպությունների լեզալ քողարկում»:

Պահանջվեց կուսակցութայն կենտրոնական Կոմիտեյի միջամտությունը, վորպեսզի մոբիլիզացիայի յենթարկել կուսակցական կազմակերպութայնը, գտել նրան, ամբացնել, համախմբել նրա շուրջը անկուսակցական խորհրդային ակտիվիստ և ուժեղ հարվածով ջախջախել կուլակային սաբոտաժը:

Անցյալ տարվա աշնանից սկսած կենտրոնական Կոմիտեն և կառավարությունը ցույց տվին յերկրամասին իր չափով բացառիկ և սիստեմատիկ ոգնություն: Ոգնություն սերմացուներով, պարենով և կերով: Ոգնություն տրակտորներով և մեքենաներով:

\* 1933 թ. 15 դեկտ. «Գրավոյի» առաջնորդողը



Ոգնություն մարդկանցով: Ոգնություն կոնկրետ  
ցուցմունքներով՝ գյուղատնտեսական արտադրութեան  
ամեն մի ամենապատասխանատու ըստեյին:

Կենտրոնական Կոմիտեն Հյուսիսային Կովկասն  
ուղարկեց քաղաքաբնիկներում աշխատելու համար ջո-  
կատներ թվից լավագույն, ամենավորակավորված  
բոլշևիկներին: Կենտկոմի գյուղատնտեսական բաժինը  
և ընկ. Կազանովիչը, վորպես այդ բաժնի վարիչը,  
անմիջական մասնակցություն ունեցան յերկրամասի  
թե՛ գարնանացանի կամպանիան, թե՛ քաղհանը և իհ  
բերքահավաքը կազմակերպելու գործում:

Այս բոլոր միջոցառումների շնորհիվ, Հյուսիսային  
Կովկասն ավարտում է ներկա գյուղատնտեսական  
տարին՝ վերակառուցվելով, ամրանալով, դասակարգա-  
յին սուր պայքարի փորձով խրատված կուսկազմա-  
կերպութեամբ, քաղաքականապես և կազմակերպչա-  
կան-տնտեսական տեսակետից զգալիորեն ամրացնե-  
լով կոլտնտեսային գործին նվիրված անկուսակցա-  
կան ակտիվի բավական ուժեղ կազրերով ղինված  
կոլտնտեսութուններով, վորոշ տնտեսական հաջո-  
ղություններով և յերկրամասի գյուղատնտեսութեան  
արդեն սկսվող վերելքի արագ զարգացման պարզ հե-  
ռանկարներով:

Հյուսիսային Կովկասը գտնվում է վերելում: Այս  
արդեն պարզ հայտնի յեր այս տարվա ամռանը, սա  
բացարձակապես անվիճելի դարձավ այժմ, հացահանձ-  
նումը ժամանակից շուտ կատարելուց հետո: Կու-  
սակցութեան XVII-րդ համագումարի առաջ այս նոր  
հաղթանակը, վորն ինքն ըստ ինքեյան կարևոր է, միև-  
նույն ժամանակ մի անգամ ևս ընդգծում է մեր  
Միութեան վիթխարի նվաճումները և տնտեսական  
աճը, նրա հզորութունը, ամբողջութունը: Այս հաղթա-

նակը մի անգամ ևս ընդգծում է մեր կուսակցու-  
թեան ուժն ու հզորութունը, նրա գլխավոր գծի նշ-  
տությունը և հաջողութունը:


Կուսակցութեան XVII-րդ համագումարի առաջ, Հյու-  
սիսային Կովկասի բոլշևիկները, վորոնց մեջ այժմ  
քիչ չեն վորակյալ, ընտրովի ընկերներ, պետք է  
կշռադատեն այն նոր պարտավորությունները, վոր  
դնում է նրանց վրա ձեռք բերված առաջին յուրջ հա-  
ջողութունը: Հյուսիսային Կովկասը — դա հսկա յերկ-  
րամաս է հսկայական հաջողություններով, իսկ  
հայտնի յե, վոր ում շատ է տրված, նրանից շատ էլ  
պահանջվում է:

Հյուսիսային Կովկասի բոլշևիկները և անկուսակ-  
ցական ակտիվիստներն ամենից ավելի քիչ կարող են  
բավարարվել ձեռք բերած հաջողութեամբ: Դեռ շատ  
բան կա, վոր չի ավարտված, վոր դեռ հենց նոր է  
սկսված:

Հյուսիսային Կովկասն իր սրամաղրութեան սակն  
ունի այնպիսի վորակավորված կուսակցական կազ-  
րեր, անկուսակցական ակտիվիստների այնպիսի բա-  
նակ, վոր նա ընդունակ է արագորեն զարգացնելու  
այս սուրվա հացադուրբունը յեվ դուրս գալ խորհր-  
դային Միութեան ամենաառաջավոր մարզերի շար-  
քը: Դրա համար հարկավոր է այժմ ուշադրութունը  
կենտրոնացնել մի քանի, դեռ թույլ մնացած ընագա-  
վառների վրա:

Ամենից առաջ, ինչպս յերևում է բերքահավաքի  
և աշնանացանի փորձից, յերկրամասում շատ ուայոնա-  
կան կուսկազմակերպություններ և յերկրային մարմին-  
ներ դեռ ևս ծանոթ չեն առանձին կոլտնտեսութունների  
և ուայոնների իսկակոն դրութեան, վորի պատճառով  
յերբեմն պակասում է կոնկրետութունը, յպերատի-

55978-66  
55



ИНСТИТУТ  
СОСТОЯНИЕ  
Сентябрь 1927



վաթիշունը և ճկունութիւնը կախնատեսութիւններն ու խորհանտեսութիւնները ղեկավարելու գործում: Հենց զբանով ել բացատրվում է այն հանգամանքը, վոր շնայած գյուղատնտեսական արտադրութիւնն համար այս տարվա նպայմաններն ընդհանրապէս չափազանց նպաստավոր են յեղել, բայց և այնպէս շատ կոխնատեսութիւններում և մի քանի խորհանտեսութիւններում բերքի կորուստներն զգալի յեն: Մանավանդ, մի քանի ռայոնների կողմից այս տարի թույլ տրված խոշոր սխալներից մեկը — դա կոխնատեսականներին կանխավճար տալու սահմանված կարգ ու կանոնի խախտումն է յեղել, վորպիսին չզուցանող տագործել կուլակային տարրերը:

Յերկրամասում դեռ ևս թույլ է հողային մարմինների աշխատանքը: Այս տարվա գարնանից նկատվում են հողի մշակման տեխնիկայի բարելավումներ, սակայն նրանք վոչ մի կերպ չեն կարող բավարարել այն յերկրամասին, վորը ձգտում է դառնալ առաջավոր: Ցանքսաշրջանառութիւնն հողամասերը չեն վորոշված կոխնատեսութիւնների մեծ մասի համար սերմացունների տեսակների հարցը դեռ շարունակում է մնալ չլուծված, բավականաչափ յեռանդով պայքար չի տարվում մոլախոտերի դեմ:

Այս բոլոր թերութիւններն առանձին ուժով կարող են անդրադառնալ առաջիկա գարնան վրա, յեթե ռայոնական կուսկազմակերպութիւնները և քաղաքաժինները հենց այժմվանից լրջորեն չձեռնարկեն ազրոտեխնիկայի և մեքենաների տեխնիկայի յուրացմանը, յեթե նրանք հիմնավորապէս ճնշում գործ չզնեն հողային օրգանների վրա և չկազմակերպեն նրանց աշխատանքը: Առանձին ուշադրութիւն պետք է դարձնել տրակտորային պարկը կարգավորելու, տրակտոր-

ների և մեքենաների վերանորոգումն օրինակելի կերպով կազմակերպելու, կենդանի քաշող ուժը խնամելու վրա:

Վերջապէս մասսայական աշխատանքի մասին: Հյուսիսային կովկասը այս տարի կարող է պարծենալ այս բնագավառում ունեցած զգալի հաջողութիւններով: Քաղաքաժինների շնորհիվ, յերկրամասում մասսայական աշխատանքը չտեսնված թափ ընդունեց: Հյուսիսային կովկասի մասին կարելի յէ համարձակորեն ասել, վոր այստեղ համոզմունքը դարձավ կուսաշխատանքի գլխավոր մեթոդը: Սակայն մասսայական աշխատանքում կա և թերութիւն: Այդ թերութիւնը կայանում է նրանում, վոր մասսայական աշխատանքը յերբեմն տուժում է բանիմացութեան բացակայութիւնից: Շատ համագումարներ, կոնֆերանսներ, ժողովներ կազմակերպելը վատ չէ գործի սկզբնավորութիւնն համար, բայց քիչ են մասսայական աշխատանքի վերաբերյալ գործնական միջոցառումները: Վերցնենք, օրինակի համար, վորձնականութիւն, անասնաբուժութիւնն սիրողների խմբակները, ազրոտեխնիկներ և այլն, վորոնք զարգանում են ուրիշ յերկրամասերում, բայց Հյուսիսային կովկասում նրանք շատ քիչ են:

Իհարկե դեռ կան այլ թերութիւններ, բայց համենայն դեպս բանը նրանում չէ, վոր նրանց թվենք: Մենք բերինք միայն ամենաաչքի գարնավոյները նրա համար, վորպէսզի ցույց տանք, վոր անավարտ գործեր դեռ շատ են:

Հյուսիսային կովկասյան յերկրամասը, վորը զրտնվում է վեւելի սկզբին, կարող է և պետք է վերացնի այդ թերութիւնները:

Կհուսանք, վոր XVII-րդ կուսակցական համագումարին Հյուսիսային կովկասի կուսակցական կազմակեր-



պությունը կլիմավորի նոր հաղթանակների ռապոր-  
տով—գարնանացանին նախապատրաստվելու վճռական  
հաջողությունների ռապորտով: Հուսով ենք, վոր գար-  
նանացանն ևս կանցկացնի այնպես, ինչպես վոր վա-  
յել ե մեր Միության խոշորագույն յերկրամասի բոյ-  
շակիներին:

## ԿՅԱՆՔՆ ՍԿՍԵՑ ԸՆԹԱՆԱԼ ՆՈՐ ՁԵՎՈՎ

Կուսակցությունը դիմավորում է XVII-րդ համագու-  
մարին: Ամբողջ յերկիրը—գործարանները և ֆաբրիկա-  
ները, կոլտնտեսություններն ու խորհանտեսություն-  
ները, դպրոցները, գիտական լաբորատորիաները, ճա-  
նապարհները—արձագանքում են հաղթական ռապորտ-  
ներով: Ամբողջ յերկիրը—բանվորներն ու կոլտնտե-  
սականները, գիտնականները, գյուղատնտեսները, ինժե-  
ներները, արտիստները—կազմում է կուսակցության  
հաշվետվությունը սոցիալիստական շինարարության  
հաջողությունների մասին: Վերջին որերս այդ հաշվե-  
տվության մեջ մացված է նոր, առանձնապես փայ-  
լուն եջ, դա—Հյուսիսային Կովկասի ռապարսն ե  
հացահանձնման ավարսման մասին:

Դեկտեմբերի 10-ին Հյուսիսային Կովկասն ամբող-  
ջովին կատարեց հացահանձնման առաջադրությունը  
բոլոր կուլտուրաներով և բոլոր սեկտորներում: Հացա-  
հանձնումն ավարտված է որենքով սահմանված ժամ-  
կետից շուտ, և 2 ամսով ավելի շուտ, քան անցյալ  
տարիները: Յերկրամասի կողմից հացը 25 միլիոն  
փութով ավելի յե մթերված, քան 1932 թիվը, քան նա-

\* «Իզվեստա» 1933 թվի դեկտեմբերի 14-ի



խորդ բոլոր տարիները, բացի բերքատուտ 1931 թվականից:

Վերջերս ինչ պարծանքով և ուրախությամբ մենք նշեցինք Ուկրալիստների հաջողությունները հացահանման ասպարիզում: Այն հաղթանակին, վոր ձեռք բերեցին Հյուսիսային Կովկասի բոլշևիկները, մի լեզվրամասի, վորտեղ ապոնների մի մասը գեռ վաղուց չե, ինչ հանդիսանում եր ամենահաճառ կուլակային սաբոտաժի ոջախ, Խորհրդային Միության բանվորներն ու կուլտետեսականները կգիմավորեն մեծ գոնունակությամբ: Բացի դրանից, Հյուսիսային Կովկասի հաղթանակը, անկասկած, արձագանք կգտնի նաև արտասահմանում — կհանդիպի մեր բազմաթիվ բարեկամների ուրախալի արձագանքներին և թշնամիների կատաղությանը և հրասթափությանը: Կուլտետեսային ձեր խորհրդային իշխանության դեմ ոգտագործելու նպատակով կուլակների կատարած փորձերն իբր թե պիտի վերակենդանացնեյին կարճատես ինտերվենտներին հույսերը: Կուլակային սաբոտաժը և հակահեղափոխական ֆասսարարների քայքայիչ աշխատանքը վնասակարպես ցայխալաված են, ջախջախված են միլիոնավոր կուլտետեսականների կողմից՝ կուսակցության և գյուղում նրա առաջավոր շոկատի — քաղբաժինների դեկավարությամբ, խորհուրդների դեկավարությամբ:

Բացի հացահանման առաջադրությունը կատարելու հաջողությունից, Հյուսիսային Կովկասը այս տարի տարալ մի շարք ուրիշ խոշոր հաղթանակներ գյուղում: Լուրջ առաջխաղացում ե նկատվում բերքատվությունը բարձրացնելու, կուլտետեսականների նյութական-կենցաղային դրությունը բարելավելու, խոշոր սոցիալիստական գյուղատետետեսության տեխնիկան տիրապետելու ասպարիզում: «Կուսակց սկսեց բնքանալ նոր

պայմանների համաձայն» — վերջերս «Բզգիտաթյուն» գրեցին յերկրամասի առաջավոր գյուղխորհուրդներին նախագահները, և նրանք ճիշտ են բնորոշում այն հակայական ուղին, վոր մի տարում անցավ Հյուսիսային Կովկասի գյուղը: Սակայն մենք առանձնապես կանգ կառնենք հացահանման հաջողությունների վրա, վորովհետև դա հանրագումարն ե այն ամբողջ աշխատանքի, վորը կատարված ե կուլտետետեսություններում, վորովհետև պետության հանդեպ ունեցած իրենց պարտավորություններն առաջին հերթին կատարելու համար կուլտետետեսությունների մղած պայքարը — դա բոլոր կուլտետետեսությունները բոլշևիկյան և բոլոր կուլտետետեսականներին ունեոր դարձնելու համար մղվող դասակարգային պայքարի հանգուցավոր մասն ե:

Բանից գուրս յեկավ, վոր Հյուսիսային Կովկասի բոլշևիկներն ընդունակ են ձանաչելու և ուղղելու այն լուրջ սխալները, վոր նրանք թույլ տվին գյուղապետետեսությունը դեկավարելու գործում. այդ սխալները կայանում եյին նրանում, վոր յերկրամասի կուսակցական կազմակերպությունը թերագնահատեց կուլտետեսության դիմադրության ուժը, չկարողացավ ժամանակին նկատել դասակարգային թշնամու նոր մանյովրները, չհասկացավ այն նոր պայմանները, վորոնք ստեղծվեցին գյուղում կուլտետետեսությունների հաղթանակի պատճառով, ժամանակին չմերկացրեց կուլտետետետեսությունների և կուլտետետեսականների իդեալականացման ուղորտունիստական հակումները: Փյուղի աշխատանքի մասին ընկ. Ստալինի տված ծրագրային ցուցմունքները, նրա մարտական լուրնը — քոշոր կուլտետետետեսությունները դարձնել բոլշևիկյան, իսկ բոլոր կուլտետետեսականներին — ունեոր, Հյուսիսային Կով-



կասի բուշխիկները զրին իրենց աշխատանքի հիմքում և կուսակցության ու կառավարության ոգնությունը հաղթահարեցին գլխավոր դժվարությունները, խորտակեցին կուլակային տարրերի սարսուռը և դուրս բերին կոլտնտեսություններին կազմակերպչական, տնտեսական և քաղաքական հետադա ամրապնդման լայն ճանապարհի վրա:

Հյուսիսային Կովկասի համար 1933 թիվը դժվարությունների վերջին տարին է: Սա անվիճելի յե: Սակայն Հյուսիսային Կովկասի բուշխիկները վոչ մի բողբե չպետք է հրապուրվեն և գոռոզանան ձեռք բերած հաջողություններով: «Անկասկած, յերկրամասը գտնվում է վերելքում, բայց դա միայն սկիզբն է» (Մոլոտով): Գյուղատնտեսության հետամնաց բնագավառների թերությունները և անկանոնությունները գեռ շատ են: Հյուսիսային Կովկասցիները դաս պետք է վերցնեն այս տարվա պրակտիկայից, պետք է ոգտագործեն իրենց բոլոր հսկայական հնարավորությունները և անխոնջ կերպով, մինչև այժմ յեղածից ել ավելի բարձր տեմպերով շարժվեն դեպի առաջ:

Իսկ դրա համար հնարավորություններ շատ կան:

Գյուղատնտեսական տարվա հանրագումարները Հյուսիսային Կովկասում մաբիլիզացիայի յեն յենթարկում յերկրամասի կոլտնտեսային մասսաներին՝ «ախասել ազնվորեն, պանպանել կոլցնեսաային բարիք» ստալինյան լոզունգի կատարման համար մղվող հետադա պայքարի շուրջը: Կոլտնտեսականները գործով համոզվեցին, թե ինչպես խորհրդային իշխանությունը հաստատ և անշեղորեն կատարում է հացահանձնման անխախտելի որենքը:

Յերկրամասում հազարավոր կոլտնտեսականներ մի աշխուրին ստացել են 8—10—15—20 և ավելի կիլո-

գրամ, իրենց յիակատար տրամադրություն տակ ստացել են 700—800 ախան և ավելի փութ հաց: Սյս կոլտնտեսությունների որինակը վոաքի պետք է հանի յերկրամասի բոլոր կոլտնտեսություններին պայքարելու Հյուսիսային Կովկասի կոլտնտեսությունները վերջնականապես սոցիալիստական գյուղի առաջավոր շոկատ դարձնելու համար:

Հացահանձնման վաղ ավարտումը ամենալավ պայմաններ են ստեղծում ցանխին բուշխիկորեն նախապատրաստվելու համար:

Կոլտնտեսությունները կատարեցին առաջին պատգամը — հացահանձնման առաջադրությունը: Սերմացունների ամբարումը — դա կոլտնտեսականների յերկրորդ պատգամն է: Յերկրամասին դեռ չբավականացող 15 տոկոս սերմացուն պետք է հավաքվի ամենակարճ ժամկետում: Բոլոր ուժերը պետք է կենտրոնացվեն նրա համար, վորպեսզի մոլախոտերից մաքրել կոլտնտեսությունների և խորհրտնտեսությունների դաշտերը և յխոտ բարձրացնել բերքատվությունը, հաջորդ տարում 100 տոկոսով ոգտագործել բոլոր տրակտորները, կոմբայները և այլ մեքենաները, վորոնք առատորեն մուտք են գործում յերկրամասը, նախապատրաստել կազմակերպիչների և կոլտնտեսային բրիգադների ղեկավարների կադրեր, մեքենավարների կադրեր: Խորհրտնտեսությունները պահանջում են յերկրամասի կուսակցական կազմակերպության և խորհուրդների հատուկ ուշադրությունը: Նրանք այս տարի վորոշ չափով լավացրին իրենց աշխատանքը, սակայն դեռ չեն դրավել այն տեղը, վոր վայել է նրանց, ավազագույն և Խորհրդային Միության մեջ ամենից ավելի լավ սարքված հացահատիկի և մսի պետական յսոշորագույն գործարանին: Հացահա-



տիկային տնտեսութեան ասպարեցում ձեռք բերած հաջողութեաններն ամրացնելով, յերկրամասը վճռահանապես առաջ պետք է տանի անասնաբուծութեան գարգացումը, վորը խոշոր տեղ է գրավում միջ միայն յերկրամասի, այլ և միջ Միւթեայի տնտեսութեան մեջ, առաջ պետք է տանի նաև Տեխնիկական մշակութեան (բամբակ, ծխախոտ, արևածաղիկ), խաղաղագործութեան յեւ միջգործութեան գարգացումը:

Յերկրամասի կուսակցական կազմակերպութեանները և խորհուրդներն իրենց հետագա աշխատանքի համար հիմնական դասը պետք է վերցնեն քաղաքացիներին աշխատանքի պրակտիկայից: Առաջավոր գյուղ-խորհուրդների նախագահների հայտարարութեանը, զոր մենք մեջ բերինք վերևում — «Կյանքն սկսեց բնթանալ նոր պայմանների համաձայն», անխզելիորեն կապված է քաղաքացիների աշխատանքի հետ: «Մենք վաղ քաղաքացիներն յեկան, մեր ստանիցաների և կուստեսութեանների կյանքն ու աշխատանքն սկսեցին բնթանալ նոր պայմանների համաձայն: Մենք ավելի ազնվորեն և համերաշխ կերպով սկսեցինք աշխատել և շատ հաջողութեաններ ձեռք բերինք նրանց ՚նեա միասին»,

Սա կուստեսականների հիացմունքի առաջին արձագանքը չէ քաղաքացիների գործունեութեան մասին: Չկա այնպիսի մի նամակ, դիմում, ռապորտ, վորտեղ կուստեսականները մեծ խանդավառութեամբ և շնորհակալութեամբ շարտահայտվելին պրոլետարական քաղաքի կողմից ուղարկվածների աշխատանքի մասին: Հյուսիսային Կովկասի քաղաքացիները միջ միջ — պիտեներնից սկսած մինչև հին կուստեսականներին գվարդիան — պայքարի հանեցին բոլշևիկյան կուստեսականների համար: Սյուսեղից էլ անա

կուստեսականները աշխատանքի բարձր փորակի համար առաջացած պիտեներնի և ծերունի կուստեսականների շարժումը Հյուսիսային Կովկասից տարածվեց ամբողջ Միւթեայի մեջ: Բոլշևիկյան անհաշտելիութեան կուստեսականները գործի թշնամիների դեմ պայքարելու գործում, ղեկավարման կոնկրետութեան, գործին մոտիկից ծանոթ լինելը, կուստեսականների հանդեպ պայքար և անկեղծ վերաբերմունք ցույց տալը — անա այն հատկութեանները, վորոնց շնորհիվ քաղաքացիները հեղինակութեան ձեռք բերին, պետք է յուրացնեն յերկրամասի բոլոր խորհուրդները: Նրանից շատերը վերակառուցվեցին, կրնակալու ընթանում են փթիթոզ ու անող գյուղի հետ միասին, բայց առանձին կազմակերպութեաններ ղեռ շարունակում են հետ մնալ, ղեկավարութեան ձեռք — բյուրոկրատիկ մեթոդները ղեռ չեն վերացված: Պես է սովորել աշխատել յեվ ղեկավարել այնպես ինչպես քաղաքացիները — անա այս պահանջը պես է ներկայացվի բոլոր նրանց, վորոնց կուսակցությունը վստահացել է կոյսնեստություններ ղեկավարելու բարդ յեվ պահասխանաճու գործը:

Խիստ և դաժան դպրոց անցան յերկրամասի կուսակցական կազմակերպութեանը, խորհուրդները և կուստեսականները: Նրանք կապվեցին կովի մեջ: Կուստեսականները մասսան զոտքի յեր հանված պայքարելու ծուլերի, սոցիալիստական սեփականութեան հափշտակողների դեմ, և այս պայքարում ձեռք բերեց խոշոր հաջողութեաններ: Կուստեսականները ավելի աշխատանքի, ազնիվ վերաբերմունքը պետական պարտավորութեանների հանդեպ լիովին վարձատրված է: Կուսակցութեան, քաղաքացիների և խորհուրդների ղեկավարութեամբ, Հյուսիսային Կովկասի







113  
4112  
Цена 10 4112  
коп.

29.921

3500

2007

СЕВЕРНЫЙ КАВКАЗ  
НА ПОДЪЕМЕ

На армянском языке

7.4 АДР 1977

СКЛАД ИЗДАНИЯ  
Ростов на Дону  
Ул. Ф. Энгельса, 90  
ПАРТИЗДАТ